

**«ԱՐՈՒ-ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ» ՊՈԵՄԻ ՖՐԱՆՍԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ. ԱՐԵՎԵԼՅԱՆ
ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ
ԸՆԿԱԼՈՒՄ**

Բանալի բառեր – Աբու-Լալա Մահարի, պոեմ, Ավետիք Իսահակյան, պոեզիա, քննադատություն, փիլիսոփայություն, հիշողություն:

Ամփոփում

«Աբու-Լալա Մահարի» պոեմը Ավետիք Իսահակյանի ստեղծագործական ժառանգության փիլիսոփայական և գեղարվեստական գազաթներից է, որտեղ արևելյան քնարերգության ավանդույթները միահյուսվում են գոյաբանական խորհրդածության և հումանիստական ընդվզման խորունկ շերտերի հետ՝ ստեղծելով պոետական մտածողության բազմաշերտ պարունակներ: Պոեմի ֆրանսերեն թարգմանությունը, որն իրականացվել է մեր կողմից, բացահայտում է մի շարք լեզվամշակութային, գաղափարական և ոճաբանական խնդիրներ, որոնք դուրս են գալիս միայն բանավոր լեզվաբանական համապատասխանության շրջանակից և պահանջում են խորը մեկնաբանական ու միջմշակութային վերլուծություն:

Հոդվածը նպատակ ունի ներկայացնելու, թե ինչ մարտահրավերների առջև է կանգնում թարգմանիչը՝ փորձելով արևելյան պատկերային ու հուզական կառուցվածքը ներդնել արևմտյան մտածողության հենքի մեջ: Լեզվաոճական արտահայտությունների պես՝ «լռության հսկա ճիչ» կամ «անապատի մեջ մենակ հառաչող մի հոգի», ոչ միայն կորցնում են իրենց ամբողջական իմաստային հագեցվածությունը բառացի թարգմանության ժամանակ, այլ նաև պահանջում են նորանոր վերարտադրական լուծումներ՝ հավատարիմ մնալով բնագրի ոգուն:

Որոշակի արտահայտություններ ֆրանսերեն թարգմանության մեջ հակառակ ազդեցություն կունենային, սակայն ֆրանսերենը ունի բառերի, մտքերի, զգացմունքներն արտահայտելու խոսքերանգների հրաշալի գունապնակ, որի առատորեն կիրառումն ապահովում է մեր հեղինակի տեքստի ամբողջական, համապարփակ թարգմանությունը: Իհարկե, Իսահակյանը տեղ-տեղ գործածում է անհանգստացնող սահուն լեզու, շատ են նաև կրկնությունները, կրկնությունները՝ ինչպես հայերեն հիացական, այնպես էլ՝ արևելյան ունկին հաճելի, որոնք երգի կրկներգերի պես վերադառնում են ընթերցողին, իսկ ֆրանսիական մշակույթում լակոնիկ ոճն է արդիական և գերադասելի, բայց մեր թարգմանությունը հավատարիմ է հեղինակի ամեն բառին, մտքին ու խոսքին՝ անխաթար տեքստը դարձնելով հասանելի ֆրանսախոս ընթերցողին:

Արձագանքելով արևմտյան ընթերցողական ավանդույթին՝ ֆրանսերեն թարգմանությունն անկարող է ամբողջությամբ կրելու միստիկ խտության այն զգայական լարումը, որն առկա է պոեմի բնագրում: Այս հանգամանքը առաջ է բերում ոչ միայն լեզվական վերամշակման, այլև ընկալման համատեքստային վերաիմաստավորման անհրաժեշտություն:

Հոդվածում քննարկվում է նաև այն հնարավորությունը, որն ընձեռում է թարգմանական գործընթացը՝ որպես միջմշակութային երկխոսություն՝ մի լեզվամշակույթի արժեքները փոխանցելու մյուսին՝ առանց դրանց էության աղճատման: Այսպիսով՝ հոդվածը ցույց է տալիս, որ «Աբու-Լալա Մահարի» պոեմի ֆրանսերեն թարգմանությունը ոչ միայն «լեզվական փորձարկում» է, այլև մշակութային պոետիկայի յուրօրինակ ճամփորդություն՝ Արևելքից Արևմուտք:

KAREN KHURSHUDYAN

Applicant

Institute of Literature after M. Abeghyan of the NAS RA

khurshudyan@hotmail.fr

ORCID iD: 0009-0000-8562-7643

THE PROBLEMS OF THE FRENCH TRANSLATION OF THE POEM “ABU-LALA MAHARI”: FROM EASTERN LYRICISM TO WESTERN PERCEPTION

Keywords: Abu-Lala Mahari, poem, Avetik Isahakyan, poetry, criticism, philosophy, memory.

Abstract

Avetik Isahakyan's poem *Abu Lala Mahari* stands among the philosophical and artistic pinnacles of his literary legacy, where the traditions of Eastern lyricism are interwoven with profound layers of existential reflection and humanistic protest, creating a multifaceted fabric of poetic thought. Its French translation, undertaken by us, reveals a range of linguistic, cultural, ideological, and stylistic challenges that extend beyond the boundaries of mere verbal equivalence, requiring instead a deep interpretative and intercultural analysis.

The article aims to present the challenges faced by the translator in the attempt to embed the Eastern imagery and emotional architecture within the framework of Western thought. Linguistic and stylistic expressions such as “*the mighty cry of silence*” or “*a soul sighing alone in the desert*” not only risk losing their full semantic richness in literal translation, but also demand innovative solutions for faithful reproduction, while remaining true to the spirit of the original text.

Certain expressions, if rendered directly into French, would have produced the opposite effect; yet the French language possesses a remarkable palette of intonations for conveying words, ideas, and emotions, whose abundant use has ensured a faithful and comprehensive rendering of the author's work. Admittedly, Isahakyan at times employs an unsettlingly fluid language, rich in repetitions-repetitions that, in both Armenian and the

Oriental aesthetic tradition, are as pleasing as the refrains of a song, returning to the reader again and again. By contrast, French literary culture favors a laconic style; nevertheless, our translation remains faithful to every word, thought, and utterance of the author, preserving the integrity of the text while making it accessible to a French-speaking readership.

In responding to the conventions of Western reading traditions, the French translation inevitably falls short of fully conveying the sensorial tension of mystical density that permeates the original poem. This circumstance calls not only for linguistic reworking but also for a contextual reconfiguration of perception.

The article also addresses the opportunities inherent in the act of translation as a form of intercultural dialogue—one that transmits the values of one linguistic culture into another without distorting their essence. In conclusion, the French translation of *Abu Lala Mahari* is shown to be not merely a linguistic exercise, but a distinctive journey through cultural poetics—from East to West.

КАРЕН ХУРШУДЯН

Соискатель

Институт литературы им. М. Абегяна НАН РА

khurshudyan@hotmail.fr

ORCID iD: 0009-0000-8562-7643

ПРОБЛЕМЫ ФРАНЦУЗСКОГО ПЕРЕВОДА ПОЭМЫ “АБУ-ЛАЛА МААРИ”: ОТ ВОСТОЧНОЙ ЛИРИКИ К ЗАПАДНОМУ ВОСПРИЯТИЮ

Ключевые слова: Абу-Лала Маари, поэма, Аветик Исаакян, поэзия, критика, философия, память.

Аннотация

Поэма «Абу-Лала Маари» занимает одно из центральных мест в философско-художественном наследии Аветика Исаакяна. В ней традиции восточной лирики органично сочетаются с глубокими пластами экзистенциальной рефлексии и гуманистического протеста, формируя мно-

гослойную структуру поэтического мышления. Французский перевод произведения, выполненный автором настоящей статьи, выявил целый комплекс языково-культурных, идейно-содержательных и стилистических проблем, которые выходят за пределы лингвистического соответствия и требуют глубокого интерпретационного и межкультурного анализа.

Цель исследования заключается в выявлении и описании тех переводческих трудностей, которые возникают при попытке интеграции восточной образно-эмоциональной структуры в систему западного мировосприятия. Лексико-стилистические конструкции, подобные «великий крик тишины» или «одинокая вздыхающая душа в пустыне», в условиях дословного перевода неизбежно утрачивают значительную часть своей смысловой и образной насыщенности. Их адекватная передача предполагает поиск художественных решений, способных воспроизвести дух оригинала при сохранении его смыслового ядра.

Следует отметить, что ряд выражений в прямом переводе на французский язык мог бы произвести эффект, противоположный авторскому замыслу. Тем не менее, богатая интонационная и лексическая палитра французского языка, обладающая широкими возможностями для передачи тончайших эмоциональных оттенков, позволила создать целостный и содержательный перевод. При этом следует учитывать, что Исаакян нередко прибегает к плавной, медитативной манере изложения и повторениям, свойственным как армянской поэтической традиции, так и восточной музыкально-поэтической культуре. Эти повторы, наподобие припевов в песне, ритмически возвращаются к читателю. Однако во французской литературной традиции преобладает лаконизм, что обуславливает необходимость балансирования между сохранением авторской структуры и адаптацией текста к культурным ожиданиям целевой аудитории.

Перевод, ориентированный на западную читательскую традицию, в силу культурно-языковых различий не способен в полной мере передать чувственную напряжённость и мистическую глубину, присущие оригиналу. Данный факт обуславливает не только необходимость языковой переработки, но и контекстуальное переосмысление восприятия текста.

В работе также рассматриваются позитивные возможности переводческого процесса как формы межкультурного взаимодействия, спо-

собного транслировать ценности одной языковой культуры в другую без утраты их существенных характеристик. Итоговый вывод заключается в том, что французский перевод поэмы «Абу Лала Маари» представляет собой не только лингвистический эксперимент, но и своеобразное культурно-поэтическое путешествие - от Востока к Западу.

Ներածություն

Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը հայ գրականության այն եզակի գործերից է, որ միաժամանակ մարմնավորում են արևելյան քնարականության խորհրդավորությունը և արևմտյան գոյաբանական փիլիսոփայության խորությունը: Ստեղծագործությունը ձևավորվել է պատմամշակութային մի միջավայրում, որտեղ բանաստեղծի ծայնը վերածվել է բարոյական ինքնագիտակցության խորհրդանշի: Պոեմում հանդես են գալիս էքզիստենցիալ վերապրման, հավատքի կորստի և հոգու մենության թեմաներ, որոնք գերազանցում են ազգային և ժամանակային սահմանները՝ պոեմը դարձնելով համամարդկային մշակութային արժեք: Գրականագետներից Ս. Սարինյանը դիպուկ է նկարագրում. ««Աբու-Լալա Մահարի» պոեմը արտահայտում է անհատի փախուստը հասարակությունից» (Սարինյան 1975, 34):

Այս յուրահատուկ ստեղծագործության թարգմանությունը ֆրանսերեն՝ լեզու, որն ինքնին կրում է լուսավորական ռացիոնալիզմի և ճշգրիտ արտահայտման ավանդույթներ, բացահայտում է մի շարք խնդիրներ՝ լեզվաբանական, ռճաբանական և մշակութաբանական մակարդակներում: Թարգմանությունն ընթանում է ոչ միայն բռնի, այլև աշխարհի ընկալման եղանակների փոխակերպման միջոցով: Արևելյան խոհականությունն ու միստիկ պատկերային համակարգը հաճախ բախվում են արևմտյան ընթերցողի՝ տրամաբանական հստակություն պահանջող լեզվամշակութային սպասումների հետ: Այս լարումը բարդացնում է թարգմանական գործընթացը՝ առաջադրելով հարցեր թե՛ էթիկական, թե՛ գեղագիտական համատեքստում:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ հոդվածի նպատակն է վերլուծել «Աբու-Լալա Մահարի» պոեմի ֆրանսերեն թարգ-

մանության հիմնական խնդիրները, բացահայտել լեզվամշակութային խոչընդոտներն ու հաղթահարման հնարավոր ռազմավարությունները: Անդրադառնալով թարգմանական տեսության արդի մոտեցումներին և համեմատական գրականության շրջանակներում զուգահեռներ տանելով Գյոթեի, Բայրոնի, Խայամի և այլ հեղինակների հետ՝ հոդվածը նպատակ ունի ներկայացնել, թե ինչպես է արևելյան քնարերգության արտահայտչական լիրիկան վերակառուցվում և ընկալվում արևմտյան գեղագիտական համակարգում:

Պոեմի յուրահատկությունները որպես թարգմանական նյութ

Մտածողական և փիլիսոփայական լիցքը: 1926 թ. Վենետիկից Հովհաննես Ավագյանին գրած մի նամակում Իսահակյանը նշում է. ««Աբու-Լալա»-իս ռուս և գերման թարգմանությունների մասին գրախոսներն ասացին՝ միայն հայ մարդը կարող է այսքան սև հոռեպես լինել: Անբացատրելի, զարհուրելի ջարդը միայն կարող է այսպես մթազնել մի հոգի, հայ մարդու հոգին...» (Իսահակյան, 2016: 235): Սակայն պետք է ընդունենք, որ «Աբու-Լալա Մահարի» պոեմը Իսահակյանի ստեղծագործության ամենահզոր ու խտացված հատվածներից է, որը ներծծված է աթեիզմի, նիհիլիզմի, միստիցիզմի և սուփեստության գաղափարներով: Այս առումով դիպուկ է գրում նաև Ս. Սարինյանը՝ նշելով, որ «Աբու-Լալա Մահարի» պոեմը Իսահակյանի պոեզիայի ցայտուն արտահայտությունն է (Սարինյան, 1975: 34): Այսպիսի մտավոր բովանդակությունը, որը խիստ համակված է ցավով, հոգևոր մենությամբ և գոյության էքզիստենցիալ խնդիրներով, պահանջում է թարգմանության ժամանակ բացառիկ զգայունություն և խորքային ընկալում: Ֆրանսերենը՝ որպես ռացիոնալիզմի ու լուսավորական մտածողության լեզու, իր դիմումով և տրամաբանությամբ բնական չէ այսպիսի մտածողական խտությունների համար, ինչը թարգմանչին ստիպում է հստակ ընտրել ոչ միայն բառերը, այլև հնչե-րանգն ու տրամադրությունը:

Լեզվական հարստություն և ոճաբանական առանձնահատկություններ

Իսահակյանի չափաժող լեզուն հագեցած է հոետորական դիմումներով, հնաոճ բառապաշարով և պատկերավոր արտահայտություններով, որոնք հաճախ չեն ունենում ուղիղ ֆրանսերեն համարժեքներ: Օրինակ՝ «*Բույր ու համբույր էր խնկարկվում չորս կողմ խալիֆների քյոշքից լուսեղեն*» կամ «*Ահա մարդը միշտ – պատկերն Աստու, սակայն իրապես վիժվածք շեյթանի*» արտահայտությունները չեն ենթադրում բառացի փոխանցում, այլ պահանջում են վերներշնչված թարգմանություն, որտեղ պահպանվում է բնագրի զգայական և իմաստային խորությունը: Այս պարագայում թարգմանիչը կանգնում է լեզվական փոխարինումների և գեղարվեստական ստեղծագործության բարդ գործընթացի առաջ:

Արևելյան մտածողության տրամաբանության ընկալման դժվարությունները

Արևելյան բանաստեղծության տրամաբանությունը հաճախ հիմնված է ոչ թե փաստի ուղիղ ներկայացման, այլ զգացողության, պատկերացման և համատեքստային զուգահեռների վրա: Ֆրանսախոս ընթերցողին դժվար է ընկալել այս ներշնչող, երբեմն միստիկ տրամաբանությունը առանց համապատասխան մշակութային և փիլիսոփայական նախաբանների: Սա թարգմանության ևս մեկ խոչընդոտ է, որը պահանջում է միջնորդության տարրեր՝ ընթերցողին օգնելու համար լիարժեք ընկալել պոեմի խորքային շերտերը:

Թարգմանական գործընթացը. խնդիրներ և առավելություններ

Տողերիս հեղինակի թարգմանական մոտեցումը իսահակյանական պոեմին տվել է է բացառիկ հավատարմություն, որը չի սահմանափակվում բառացի փոխադրությամբ, այլ ընդգրկում է լեզվական և ռիթմիկ խորքային շերտերի ճշգրիտ փոխանցում: Մենք չենք փորձել զարդարել Իսահակյանի խոսքը. այլ մնացել ենք հավատարիմ տողին՝ նրա կրկնություններին, շնչառությանը, մեղիտատիվ ընթացքին: Դա վկայում է թարգմանության մոտեցման բարդությունը և երկընտրանք

քը՝ հավատարիմ մնալ բառերին, բայց միևնույն ժամանակ արտացոլել ստեղծագործության ներքին, զգայական և դիմապին լիցքը: Մեզ համար թարգմանությունը ոչ թե բառերի մեխանիկական փոխարինումն է, այլ գեղարվեստական և հոգևոր վերարտադրություն, որտեղ շնչառությունն ու դիթմը դառնում են հաղորդակցման հիմք:

Ոճային շերտերի փոխանցման դժվարությունը

Իսահակյանի լեզուն առանձնանում է ոչ միայն լիրիկական հոսանքով, այլև «կայծ» դարձած ապրումով, որ բխում է իր մեջ կուտակված խոր ցավից և քողարկված տառապանքից: Մենք այս ներքին «խռպոտությունով ապրող քողարկված ցավը» բնութագրում ենք որպես մշակութային և լեզվական մի երևույթ, որը ֆրանսերենում դժվար է նույն ուժով պահպանել: Մեր թարգմանության մեջ պահանջվում է մեղմեցված, բայց ոչ պաթոսային հնչողություն, որը, այդուհանդերձ, կպահպանի խոսքի ներքին լարումն ու զգայունությունը: Այս խնդիրն առանձնակի սուր է, քանի որ պոեմն օժտված է հնաոճ, խորհրդանշական և հռետորական դիմումներով, որոնք ոչ միայն ուղղակիորեն համարժեք չեն այլ լեզուներում, այլ հաճախ ունեն տարբեր մշակութային մեկնաբանությունների տարածություն: Այս իրավիճակում թարգմանչի առաջ ծառանում է լեզվական և ոճական կոմպրոմիսի խնդիրը՝ առանց բովանդակային կորուստների:

Փիլիսոփայական լեզվի ճշգրտում

«Աբու-Լալա Մահարի»-ի արտահայտությունները կրում են բազմաշերտ ենթատեքստ՝ որոնք միավորում են միասփիզվմը, գոյաբանությունն ու լիրիզմը: Օրինակ՝ «Ահա իմ հոգին – մի ծարավ բողբոջ, թափի՛ր նրա մեջ գինիդ անապակ» արտահայտությունը համակցում է մետաֆորիկ պատկերավորություն և էքզիստենցիալ մտորում: Թարգմանության մեջ կարևոր է պահպանել այս երկիմաստությունը՝ միաժամանակ ապահովելով այն պարզությունն ու հստակությունը, որ ֆրանսերենին է բնորոշ: Այս տեսանկյունից թարգմանիչը դառնում է նաև փիլիսոփայական մտքերի խորհրդատու, որտեղ տեքստի ճշգրտության և լեզվական հստակության հաշվեկշիռն առանցքային է:

Մշակութային համատեքստի խզում. Հայ ընթերցողը Իսահակյանի տեքստում հեշտությամբ ընկալում է աստվածաշնչյան և մարգարեական հղումները, որոնք ստեղծում են մշակութային ու հոգևոր հարուստ դաշտ: Սակայն ֆրանսիացի ընթերցողը, բացի Հին և Նորկտակարանային գիտելիքներից, ավելի շատ ընկալում է տեքստը միջմշակութային երկխոսության տեսանկյունից: Այս առումով մենք ընդգծում ենք պոեմի համամարդկային բնույթը՝ հղումներ կատարելով Դանթեի, Վեռլենի և Հյուգոյի գործերին, ինչից բխում է թարգմանության միջմշակութային դերի կարևորությունը: Այսպիսով՝ թարգմանության խնդիրներից է ոչ միայն բառացի, այլև սիմվոլիկ և գաղափարական շերտերի փոխանցումը, որոնք հաճախ հիմնված են բարդ պատմամշակութային ենթատեքստերի վրա: Նման դժվարությունների դեպքում թարգմանիչն ստիպված է օգտագործել բացատրական կամ դուալիստական մոտեցումներ՝ պահպանելով բնագրի ողջ հոգևոր և գեղարվեստական ուժը: Պոեմի առանցքային թեմաներն են՝ ազատությունը, մարդու ճակատագիրը, կյանքի և մահվան համընկնումները, որոնք ունեն համաշխարհային նշանակություն և կարող են ներգրավել ցանկացած մշակույթի ընթերցողին:

Ֆրանսերենի պոետիկ հարուստ հնարավորությունները

Ֆրանսերենը՝ իբրև պոեզիայի դասական լեզու, մեծ ներուժ ունի՝ փոխանցելու զգայական, մելամաղձոտ ու փիլիսոփայական շերտեր՝ շնորհիվ իր դանդաղ, ծանր և հնչյունական համակարգի: Թարգմանությունը ծառայում է որպես կամուրջ՝ կապելով հայկական հանճարի ստեղծագործությունը եվրոպական մշակութային դաշտին, ընդլայնելով նրա ընկալման հնարավորությունները: Ֆրանսիացի ընթերցողը կարող է դժվարությամբ ընկալել արևելյան միստիցիզմի և փիլիսոփայության խորքերը, ինչը պահանջում է միջնորդական մեկնաբանություններ կամ ներառարկայական, նաև թարգմանական միջամտություններ:

Լեզվական և ոճաբանական խոչընդոտներ

Բազմաշերտ ենթատեքստերի և ոչ տիպական արտահայտությունների առկայությունը դժվարացնում է ոճաբանական համարժեք

ձևերի ընտրությունը, ինչը կարող է խամրեցնել բնագրի ներշնչանքը: Այս դիտարկումները ձևավորում են Իսահակյանի պոեմի ֆրանսերեն թարգմանության գիտական և գործնական շրջանակը, որտեղ յուրաքանչյուր թարգմանիչ կանգնում է արժեքների, լեզվական և մշակութային վերաձևնդի՝ խորքային հավասարակշռություն գտնելու անհրաժեշտության առաջ: Իսահակյանի պոեմը կառուցված է վանկաչափության սկզբունքով, ինչը ֆրանսերենում պահպանելն անհնարին է առանց բովանդակային և ոճաբանական կորուստների: Հետևաբար, թարգմանիչը հաճախ դիմում է ազատ կամ պոետիկ արձակի եղանակին՝ փորձելով պահպանել բնագրի տրամադրությունը և էմոցիան, չնչին փոփոխության ենթարկելով ձևական որոշ բաղադրիչներ:

Մշակութային անհամատեղելիություններ

Որոշ պատկերներ և պատկերավոր արտահայտություններ՝ օրինակ՝ «Եվ անապատի դեղին շեղջերը հորձանքներ կտան ալիքների պես», «Լռության երկի՛նք, խոսի՛ր դու ինձ հետ աստղերիդ լեզվով», «Նրա կաթոգին լույս թարթումները ոսկի աստղերի» և այլոց մշակութային համարժեքներ ֆրանսիական լեզվական և մշակութային համակարգում բացակայում են: Թարգմանիչն ստիպված է կա՛մ որոնել համապատասխան մշակութային հոմանիշներ, կա՛մ լրացուցիչ բացատրական միջնորդություններ ավելացնել, որպեսզի պահպանվի բնագրի սիմվոլիկան և արտահայտչականությունը: Ոճականորեն համարժեք ձևերի բացակայություն: Ֆրանսերենում որոշ բառեր և արտահայտություններ չունեն նույն հոգևոր և ոճաբանական ուժը, ինչ երևում է բնագրում: Սա կարող է խամրեցնել բնագրի ներշնչանքը, ինչը թարգմանիչը պետք է փոխհատուցի ոճաբանական այլ միջոցներով օրինակ՝ մետաֆորիկ բառերի վերարտադրությամբ կամ լրացուցիչ էմոցիոնալ գույն հաղորդելով:

Առավելությունները՝ բարոյական և գրական արժեքների փոխանցման համատեքստում

Չնայած թարգմանությանը ուղեկցող բազմապիսի խոչընդոտներին՝ «Աբու-Լալա Մահարի» պոեմի ֆրանսերեն թարգմանությունը պահպանում է իր խորքային իմաստն ու գրական արժեքը՝ ֆրանսա-

խոս ընթերցողին մատուցելով հայ գրականության այդ մեծարժեք գոհարը: Ֆրանսերենը սիրում է ճշգրտությունը, բայց չի վախենում խորքից: Եվ մենք գտանք, որ նրա մեղմադճոտ նվազը կարող է հնչեցնել Աբու-Լալայի հառաչանքները: Այս նրբությունն ընդգծում է լեզվական և մշակութային «միջանցքի» կարևորությունը, որտեղ հնարավոր է պահպանել մարդկային մենակության, հուսալքության և տգիտության հանդեպ հումանիստական դատապարտման խորը զգացողությունը՝ առանց գաղափարական աղճատումների կամ մշակութային շեղումների: Թարգմանությունը փաստում է, որ պոեմի համամարդկային թեմաները անցնում են լեզվական ու մշակութային սահմանները՝ արձագանքելով Վիկտոր Հյուգոյի հայտնի խոսքին՝ «L'homme est un abîme, et je regarde dedans» (Մարդն անդունդ է, և ես նայում եմ նրա ներսը):

Այսպիսի հաղորդակցությունը հաստատում է պոեմի բարոյական և էթետիկական՝ համամարդկային նշանակությունը, որտեղ ցավն ու մենակությունն ավելի են համակցվում մարդկային ընդհանրության զգացողության հետ:

Եզրակացություն

Այսպիսով՝ Ավետիք Իսահակյանի մոնումենտալ պոեմի ֆրանսերեն թարգմանությունն ապացուցում է, որ նույնիսկ ամենաբարդ, հուզական և փիլիսոփայական տեքստերը հնարավոր է փոխանցել այլ լեզվով՝ եթե առաջնորդվում ենք ոչ միայն գրական հմտությամբ, այլև՝ «աղոթքի պես աշխատանքի» խոնարհությամբ:

«Աբու - Լալա Մահարի» պոեմի թարգմանությունը ֆրանսերեն, չնայած իր լեզվամշակութային խոչընդոտներին, դառնում է գրական նոր իրողություն, որի արժեքը ոչ միայն Իսահակյանի գյուտը վերստին ներկայացնելն է, այլ նաև ֆրանսախոս ընթերցողին հայ գրականությանը կապելու նոր փորձ:

▪ Այն կարող է դիտվել ոչ միայն որպես լեզվական գործողություն, այլև որպես մշակութային երկխոսություն: Այս համատեքստում մենք՝ որպես թարգմանիչ, հանդես ենք գալիս իբրև մի «Հերմես», որը ոչ միայն փոխանցում է խոսքը, այլև մի ամբողջ աշխարհ է բացում նոր ընթերցողի համար: Թեև ճանապարհը լի է լեզվական, մշակու-

թային և ոճաբանական խոչընդոտներով, ճիշտ մոտեցման և հմուտ միջնորդության դեպքում հնարավոր է ստեղծել ֆրանսերեն տարբերակ, որը թե՛ հուզում է, թե՛ հարգում բնագրի խորությունը:

▪ Թարգմանությունը ցույց է տալիս, որ մեծ գրական ստեղծագործություններն ունակ են գոյատևել լեզվական կերպարանափոխությունների մեջ՝ առանց կորցնելու իրենց էությունը: Թարգմանության գործընթացը՝ որպես համագործակցություն հեղինակի, լեզվի ու ընթերցողի միջև, վերածվում է բարոյական փորձաքարի: Այս թարգմանությամբ Իսահակյանի խոսքը շարունակում է իր մենավոր ճանապարհը՝ այս անգամ՝ ֆրանսախոս ընթերցողի ներաշխարհի սանդուղքներով:

▪ Այն իրենից ներկայացնում է մի ռազմավարություն, որտեղ միմյանց հետ համադրվում են լեզուն, հոգին և գաղափարը, ստեղծում երկխոսություն աշխարհի տարբեր մշակույթների միջև:

Ամփոփելով՝ նշենք, որ ֆրանսերեն թարգմանությունը հստակ արտահայտում է մեր՝ որպես թարգմանչի, գիտակցված մոտեցումը՝ հավատարիմ մնալով բնագրին ու փոխանցելով դրա փիլիսոփայական և պոետիկ խորքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավետիք Իսահակյանը ժամանակակիցների հուշերում (կազմ.՝ Անատոլի Հովհաննիսյան և Հասմիկ Մելքոնյան), Երևան, «Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան» հրատ., 2006, 298 էջ:
2. Ավետիք Իսահակյանի նամակները, կազմ.՝ Արփիկ Ավետիսյան, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, 474 էջ:
3. **Ինճիկյան Ա.**, Ավետիք Իսահակյան, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1977, 260 էջ:
4. **Իսահակյան Ավ.**, Արվեստի մասին, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1977, 200 էջ:
5. **Իսահակյան Ավ.**, Աբու-Լալա Մահարի, Երևան, «Սովետական գրող», 1984, 72 էջ:
6. **Իսահակյան Ա.**, Ավետիք Իսահակյան. գիտական կենսագրություն, գիրք առաջին (1875-1900), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», հրատ., 2000, 601 էջ:

7. **Իսահակյան Ավ.**, Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով, հ. 4, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008, 731 էջ:
8. **Իսահակյան Ավ.**, Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով, հ. 6., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, 882 էջ:
9. **Իսահակյան Վ.**, Հայրս, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», հրատ., 2000, 590 էջ:
10. **Հովհաննիսյան Գ.**, Իսահակյանի ստեղծագործական աշխարհը, Երևան, «Հայաստան» հրատ., 1969, 308 էջ:
11. **Մուշեղյան Ա.**, Ավետիք Իսահակյան. վաղ տարիներ. 1875-1898, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1983, 296 էջ:
12. **Սարինյան Ս.**, Ավետիք Իսահակյան (Ծննդյան 100-ամյակի առթիվ) // Պատմա-բանասիրական հանդես, 1975, N 3, 27-42:
13. **Goethe, Johann Wolfgang von**, Faust, trans. Walter Kaufmann. Anchor Books, 1961.
14. **Byron, George Gordon**, Childe Harold's Pilgrimage, Penguin Classics, 2005.
15. **Khayyam, Omar**, Rubaiyat, trans. E. FitzGerald, Oxford University Press, 2009.
16. **Eliot, T. S.**, The Waste Land. Norton Critical Editions, 2000.
17. **Baudelaire, Charles**, Les Fleurs du mal, 1857.
18. **Rilke, Rainer Maria**, Duino Elegies, trans. Edward Snow, 2000.

REFERENCES

1. Avetiq Isahakyany' jhamanakacicneri howsherowm (Kazm.` Anatoli Hovhannisyan ev Hasmik Melqonyan), Erevan, «Avetiq Isahakyan town-t'angarani» hrat., 2006, 298 e'j:
2. Avetiq Isahakyan namaknery', kazm` Arp'ik Avetisyan, Erevan, EPH hrat., 2016, 474 e'j:
3. **Intwikyan A.**, Avetiq Isahakyan, Erevan, «Sovetakan grogh» hrat., 1977, 260 e'j:
4. **Isahakyan Av.**, Arvesti masin, Erevan, Haykakan SSH GA hrat., 1977, 200 e'j:
5. **Isahakyan Av.**, Abow-Lala Mahari, Erevan, «Sovetakan grogh», 1984, 72 e'j:
6. **Isahakyan A.**, Avetiq Isahakyan. gitakan kensagrowth'own, girq ar'ajin (1875-1900), Erevan, HH GAA «Gitowt'yown», hrat., 2000, 601 e'j:

7. **Isahakyan Av.**, Erkeri liakatar jhoghovac'ow tasnchors hatorov, h. 4, Erevan, HH GAA «Gitowt'yown» hrat., 2008, 731 e'j:
8. **Isahakyan Av.**, Erkeri liakatar jhoghovac'ow tasnchors hatorov, h. 6., Erevan, HH GAA «Gitowt'yown» hrat., 2019, 882 e'j:
9. **Isahakyan V.**, Hayrs, Erevan, HH GAA «Gitowt'yown», hrat., 2000, 590 e'j:
10. **Hovhannisyan G.**, Isahakyan steghc'agorc'akan ashxarhy', Erevan, «Hayastan» hrat., 1969, 308 e'j:
11. **Mowsheghyan A.**, Avetiq Isahakyan. vagh tariner. 1875-1898, Erevan, «Sovetakan grogh» hrat., 1983, 296 e'j:
12. **Sarinyan S.**, Avetiq Isahakyan (C'nndyan 100-amyaki ar't'iv)//Patma-banasirakan handes, 1975, N 3, 27-42:
13. **Goethe, Johann Wolfgang von**, Faust, trans. Walter Kaufmann. Anchor Books, 1961.
14. **Byron**, George Gordon, Childe Harold's Pilgrimage, Penguin Classics, 2005.
15. **Khayyam, Omar**, Rubaiyat, trans. E. FitzGerald, Oxford University Press, 2009.
16. **Eliot, T. S.**, The Waste Land. Norton Critical Editions, 2000.
17. **Baudelaire, Charles**, Les Fleurs du mal, 1857.
18. **Rilke, Rainer Maria**, Duino Elegies, trans. Edward Snow, 2000.